Վահագն Գրիգորյան[20]

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Նախքան վերաքննիչ դատարանի հիշյալ լիազորությունը քննարկելը, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.

1. Առաջին ատյանի դատարանի վճիռներին և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջները նույնն են: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Օրինական, հիմնավորված և պատճառաբանված պետք է լինեն նաև առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերը, թեև դա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ուղղակիորեն ամրագրված չէ: Ամեն դեպքում, շրջանառության մեջ գտնվող «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 182-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի որոշումը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված[21]:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220.2-րդ և 226-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ

---

[20] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Ս. Գ. Մեղրյան:

[21] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ շրջանառության մեջ գտնվող նախագիծը, http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_5394019566_Qax_dat_26.11.2012.pdf (20.09.2014):

դատական ակտի դեմ բողոք բերելու և դատական ակտը բեկանելու հիմքերը նույնն են թե՛ վճիռների, թե՛ միջանկյալ դատական ակտերի համար:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ բաժնի նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **դատարանի վճիռների և միջանկյալ դատական ակտերի՝ վերաքննության կարգով վերանայման ընթացակարգը գերազանցապես համընկնում է** (առկա են մի շարք ոչ էական տարբերություններ):

4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես օժտված է միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքները մերժելու իրավասությամբ: **Միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները մերժելու՝ վերաքննիչ դատարանի լիազորությունը ոչնչով չի տարբերվում վճռաբեկ դատարանի համապատասխան լիազորությունից:** Երկու դեպքում էլ լիազորության բնույթը, նպատակը և իրավաչափ կիրառման պայմանները համընկնում են:

Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները մերժելու հիմքերը նույնն են:

Անդրադառնալով քննարկվող **լիազորության բնույթին՝** պետք է նշել, որ այն հանդիսանում է վերաքննիչ դատարանի պարտադիր (ոչ հայեցողական) լիազորությունը: Համապատասխան պայմանների առկայության դեպքում վերաքննիչ դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ՝ պարտավոր է մերժել վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ թողնելով բողոքարկված միջանկյալ դատական ակտը: Ընդհանրապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված լիազորությունները պատկանում են վերաքննիչ դատարանի՝ ոչ հայեցողական (պարտադիր) բնույթ ունեցողող լիազորությունների թվին[22]:

Խոսելով միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու լիազորության մասին՝ անհրաժեշտ է քննարկել **այն հիմքերը, որոնց առկայության դեպքում միջանկյալ դատական ակտե-**

---

[22] Տե՛ս **Հովհաննիսյան Վ. Վ.,** Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջեր 323, 326:

ը թողնվում են անփոփոխ, իսկ դրանց դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

Առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերը պետք է բավարարեն **օրինականության և հիմնավորվածության** պահանջներին, որոնք ընդհանրացնում և իրենց մեջ ներառում են նաև դատական ակտերին ներկայացվող մյուս պահանջները[23]:

Բողոքարկված դատական ակտը ստուգվում է օրինականության և հիմնավորվածության տեսանկյունից[24], ինչը հանդիսանում է վերաքննիչ վարույթի կարևորագույն խնդիրը[25]: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերին, որոնց բողոքարկումը ևս հանգեցնում է վերաքննիչ դատարանի կողմից դրանց օրինականության և հիմնավորվածության ստուգմանը:

Քննարկելով այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները թողնվում են առանց բավարարման, իսկ դատական ակտերը՝ անփոփոխ, Մ. Ա. Վիկուտը նշում է, որ.

- վերաքննիչ ատյանի դատարանն իրավունք ունի մերժել վերաքննիչ բողոքը և բողոքարկված վճիռը թողնել անփոփոխ այն դեպքում, եթե վճիռը համապատասխանում է դրան ներկայացվող պահանջներին[26],

- վճռաբեկության կարգով գործը վերանայելիս՝ երկրորդ ատյանի դատարանն իրավունք ունի մերժել վճռաբեկ բողոքը՝ առաջին ատյանի դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, այն դեպքում, եթե դատարանը ամբողջական և ճշգրիտ կերպով հաստատել է գործի հանգամանքները, վճիռը կայացրել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան կամ եթե հայտնաբերվել են առանձին

---

[23] Տե՛ս **Решетняк В. И.,** Постановления суда первой инстанции по гражданским делам. Автореф. дисс. ... к.ю.н., М., 1996, էջ 9:

[24] Տե՛ս Гражданский процесс: учебник для студ. сред. проф. учеб. заведений / **В. Н. Васин, В. И. Казанцев.** - 3-е изд., стер. - М.: Издательский центр «Академия», 2008, էջ 209:

[25] Տե՛ս Гражданский процесс России: Учебник / Под ред. **М. А. Викут.** - М.: «Юристъ», 2005, էջ 214:

[26] Տե՛ս Гражданский процесс России: Учебник / Под ред. **М. А. Викут.** - М.: «Юристъ», 2005, էջ 217-218:

ոչ էական խախտումներ, որոնք չեն ազդում կայացված վճռի՝ ըստ էության ճիշտ լինելու վրա[27],

- մասնավոր բողոքի քննության արդյունքում վճռաբեկ ատյանն իրավունք ունի մերժել բողոքը և անփոփոխ թողնել առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտը, եթե առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումը օրինական և հիմնավորված է, իսկ բողոքի հիմքերը ոչ էական են[28]:

Բացի այդ, իրավաբանական գրականության մեջ առկա կարծիքների համաձայն՝ դատական ակտի դեմ ներկայացված բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը կիրառելի է այն դեպքում, երբ.

- բողոքը քննող դատարանը գտնում է, որ դատական ակտն օրինական և հիմնավորված է[29],

- դատական ակտն օրինական և հիմնավորված է, իսկ բողոքի հիմքերը գործի համար էական նշանակություն չունեն[30],

- գործի հանգամանքները դատարանի կողմից հաստատվել են ամբողջապես և ճիշտ, դատական ակտը կայացվել է գործող օրենսդրության համապատասխան, իսկ բողոքի հիմքերը և հիմնավորումները էական նշանակություն չունեն[31]:

Այս կապակցությամբ Ի. Մ. Զայցևը նշում է, որ միջանկյալ դատական ակտի դեմ բերված բողոքը կարող է մերժվել հետևյալ դեպքերում՝

1. վերաքննիչ բողոք բերած անձը խնդրել է բեկանել միջանկյալ դատական ակտը՝ հղում կատարելով համապատասխան դատավարական իրավանորմի սեփական սխալ մեկնաբանության վրա,

2. վերաքննիչ բողոք բերած անձը դիտավորյալ կամ առանց դիտավորության խեղաթյուրել է գործի հանգամանքները,

---

[27] Տե՛ս Гражданский процесс России: Учебник / Под ред. **М. А. Викут.** - М.: «Юристъ», 2005, էջ 224:

[28] Տե՛ս Гражданский процесс России: Учебник / Под ред. **М. А. Викут.** - М.: «Юристъ», 2005, էջ 228:

[29] Տե՛ս Гражданский процесс: Учебник / Под ред. **А. Г. Коваленко**, **А. А. Мохова, П. М. Филиппова.** - М.: «ИНФРА-М», 2008, էջ 268:

[30] Տե՛ս Гражданский процесс: учеб. для вузов / Под ред. **М. К. Треушникова.** -2-е изд., перераб. и доп. – М.: «Городец», 2007, էջ 544:

[31] Տե՛ս Гражданское процессуальное право России / Под ред. **П. В. Алексия, Н. Д. Амаглобели.** - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, էջ 335:

3. վերաքննիչ բողոք բերած անձը հղում է կատարել այնպիսի հանգամանքների վրա, որոնք չեն կարող հիմք հանդիսանալ դատական ակտի բեկանման համար[32]:

Այսպիսով, իրավաբանական գրականության մեջ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու լիազորության կիրառման հիմք է համարվում բողոքարկված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև՝ բողոքի հիմքերի և հիմնավորումների՝ գործի լուծման տեսանկյունից էական նշանակություն չունենալը:

Բացի այդ, մի շարք հեղինակներ, խոսելով միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների մասին, առանձնացնում են նաև **արդարության** պահանջը:

Արդարության, որպես դատավարության սկզբունքի մասին, խոսվում է մի շարք միջազգային իրավական ակտերում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր գործը հրապարակայնորեն քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից, հավասարության և արդարության սկզբունքի բոլոր պահանջների պահպանմամբ[33]:

Արդարության պահանջը, որպես դատարանի դատական ակտերին (այդ թվում նաև՝ միջանկյալ դատական ակտերին) ներկայացվող պահանջ, բազմիցս քննարկվել և հիմնավորվել է դատավարագետների կողմից[34]:

Ժամանակակից դատավարագիտության մեջ արդարացիության պահանջը որպես դատական ակտերին ներկայացվող ինքնուրույն պահանջ դիտարկող հեղինակների մեծամասնությունն այդ պահանջի առկայությունը հիմնավորում են արդար դատաքննության իրավունքի մասին միջազգային-իրավական և սահմանադրական դրույթ-

---

[32] Տե՛ս **Зайцев И. М.,** Кассационные определения в советском гражданском процессуальном праве.- Саратов, 1967, էջ 56-57:

[33] Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի թիվ 217 A (III) բանաձևով 10.12.1948 թ.), http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/declhr.shtml (10.09.2014 թ.):

[34] Տե՛ս **Теплов В. А.,** Определение суда первой инстанции по уголовному делу. Автореф. дисс. ... к.ю.н., Саратов, 1974, էջ 9, **Зайцев И. М.,** Целевые установки гражданского судопроизводства // Проблемы реформы гражданского процессуального права и практики его применения. - Свердловск, 1990, էջ 17-18:

ների միջոցով[35]:

Ամփոփելով վերը շարադրված կարծիքները և դրանք համադրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված իրավակարգավորման հետ՝ գտնում ենք, որ միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու և բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ.

ա) Միջանկյալ դատական ակտն օրինական և հիմնավորված է, իսկ դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկներն անհիմն են:

բ) Միջանկյալ դատական ակտն օրինական և հիմնավորված չէ, սակայն դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկները նույնպես անհիմն են: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Այս կանոնը վերաբերում է նաև միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանը: Հետևաբար, մերժման ենթակա են ոչ միայն օրինական և հիմնավորված միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված անհիմն վերաքննիչ բողոքները, այնպես էլ՝ ոչ օրինական և/կամ չհիմնավորված միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված անհիմն վերաքննիչ բողոքները:

գ) Միջանկյալ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը հիմնավոր է, սակայն բողոքարկված միջանկյալ դատական ակտն ըստ էության ճիշտ է և բխում է ինչպես գործում առկա ապացույցներից, այնպես էլ՝ կիրառման ենթակա դատավարական և նյութական օրենսդրությունից: Ասվածը համահունչ է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված այն իմպերատիվ կանոնի հետ, համաձայն որի՝ դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Խոսելով ըստ էության ճիշտ դատական ակտը միայն ձևական նկատառումներով բեկանելու արգելքի մասին՝ պետք է նշել, որ

---

[35] Տե՛ս **Сахнова Т. В.,** Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. – М.: "Волтерс Клувер", 2008, էջ 439-440:

մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014թ. ՀՕ-49-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը, վերը նշված արգելքը ուղղակիորեն սահմանված էր միայն վճիռների (գործն ըստ էության լուծող դատական ակտերի) համար: Խոսքը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասին, որը սահմանում է, որ **նյութական իրավունքի նորմի** խախտումը կամ սխալ կիրառումը **վճռի** բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման: Նույն օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ **դատավարական իրավունքի նորմերի** խախտումը կամ սխալ կիրառումը **վճռի** բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ **վճիռը** չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Վերը նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացվեց 220.3-րդ և 220.4-րդ հոդվածներով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220.3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ **նյութական իրավունքի նորմի** խախտումը կամ սխալ կիրառումը **վճռի** բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման: Նույն օրենսգրքի 220.4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ **դատավարական իրավունքի նորմերի** խախտումը կամ սխալ կիրառումը **դատական ակտի** բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ **դատական ակտը** չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Ամփոփելով վերը նշված նորմերը՝ գտնում ենք, որ.

- նյութական իրավունքի նորմի խախտումը (կամ սխալ կիրառումը) կարող է հանդիսանալ միջանկյալ դատական ակտի վերացման հիմք միայն այն դեպքում, եթե այն հանգեցրել է ըստ էության սխալ միջանկյալ դատական ակտի կայացման,
- դատավարական նորմի խախտումը (կամ սխալ կիրառումը) կարող է հանդիսանալ միջանկյալ դատական ակտի վերացման հիմք միայն այն դեպքում, եթե այն հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել ըստ էության սխալ միջանկյալ դատական ակտի կայացման:
- բոլոր այն դեպքերում, երբ միջանկյալ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը հիմնավոր է, սակայն բողոքարկված միջանկյալ դատական ակտն ըստ էության ճիշտ է և բխում է գոր-

ծում առկա ապացույցներից և կիրառման ենթակա դատավարական ու նյութական օրենսդրությունից, վերաքննիչ դատարանը պետք է մերժի վերաքննիչ բողոքը՝ լրացուցիչ պատճառաբանելով ուժի մեջ թողնված միջանկյալ դատական ակտը[36]:

Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից: **Այսինքն, վերաքննիչ դատարանն օժտված չէ ըստ էության ճիշտ միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու և այն լրացուցիչ պատճառաբանելու լիազորությամբ:**

Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է ձևակերպել այնպես, որ վերաքննիչ դատարանն իրավունք ունենա լրացուցիչ պատճառաբանել ըստ էության ճիշտ, սակայն թերի կամ սխալ պատճառաբանված միջանկյալ դատական ակտերը՝ դրանց դեմ բերված հիմնավոր վերաքննիչ բողոքները մերժելու դեպքում:

Ուստի նպատակահարմար ենք գտնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ դրույթով. *«Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած ըստ էության ճիշտ միջանկյալ դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը»:*

Նշվածը վերաքննիչ դատարանին թույլ կտա լրացուցիչ պատճառաբանել և օրինական ուժի մեջ թողնել ըստ էության ճիշտ, սակայն թերի կամ սխալ պատճառաբանված միջանկյալ դատական ակտերը[37]:

---

[36] Այս կապակցությամբ տե՛ս նաև **Մեղրյան Ս. Գ.,** Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 101:

[37] Օրինակ թիվ ԵԱԴԴ/0004/02/10 քաղաքացիական գործով 2010 թ. դեկտեմբերի 9-ին կայացված որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերացրել է «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2010 որոշումը՝ բացառապես պատշաճ պատճառաբանված չլինելու հիմքով:

Միջանկյալ դատական ակտն անփոփոխ թողնելու և վերաքննիչ բողոքը մերժելու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է իր որոշման մեջ հիմնավորել նման դիրքորոշումը: Ընդ որում, բողոքարկված միջանկյալ դատական ակտի՝ ըստ էության ճիշտ լինելը կարող է հիմնավորվել նաև այնպիսի փաստարկներով, որոնք այդ դատական ակտում առկա չեն, սակայն ակնհայտորեն բխում են գործում առկա ապացույցներից և կիրառման ենթակա օրենսդրությունից: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ցանկացած (այդ թվում նաև՝ միջանկյալ) դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը կարող է բավարարվել միայն այդ բողոքում նշված հիմնավորմամբ, իսկ մերժվել կարող է կիրառման ենթակա օրենսդրությունից և գործում առկա ապացույցներից բխող ցանկացած հիմնավորմամբ: Ասվածը բխում է դատական ակտը միայն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում վերանայելու իմպերատիվ պահանջից:

Բողոքարկված միջանկյալ դատական ակտն անփոփոխ (օրինական ուժի մեջ) թողնելով՝ վերաքննիչ դատարանը հաճախ հիմնվում է առաջին ատյանի դատարանի որոշման մեջ մատնանշված փաստարկների վրա: Որոշ դատավարագետների կարծիքով, նման իրավիճակի պատճառն այն է, որ դատավորների կողմից շատ հաճախ նվազ ուշադրություն է դարձվում միջանկյալ դատական ակտերի բողոքարկման նշանակությանը, այն համարվում է երկրորդական՝ համեմատած դատարանի վճռի բողոքարկման հետ[38]:

Իրավաբանական գրականության մեջ անգամ կարծիք է հայտնվել առ այն, որ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտերը (որոնք օրինական ուժի մեջ են թողնում բողոքարկված միջանկյալ դատական ակտը) լրացուցիչ պատճառաբանման ենթակա չեն: Այս տեսակետը հիմնավորվում է նրանով, որ առկա ծանրաբեռնվածության պայմաններում նպատակահարմար և խնայողական չէ դատարանի վրա դնել բողոքարկված միջանկյալ դատական ակտը չբեկանող պատճառաբանված որոշումներ կայացնելու պարտականություն[39]:

---

[38] Տե՛ս **Катукова С. Ю.,** Частное обжалование и пересмотр определений суда первой инстанции. Дисс. ... к. ю. н. - Саратов, 1998, էջ 124-125:

[39] Տե՛ս **Катукова С. Ю.,** Частное обжалование и пересмотр определений суда первой инстанции. Дисс. ... к.ю.н. - Саратов, 1998, էջ 124-125:

Ամեն դեպքում, քննարկվող լիազորության կիրառման արդյունքում վերաքննիչ դատարանի մոտ առաջանում է իր որոշումը հիմնավորելու պարտականություն: Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած կարծիքների համաձայն՝ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը կիրառելիս վերադաս դատարանը պարտավոր է իր որոշման մեջ մատնանշել այն հիմնավորումները և շարժառիթները, որոնց հիման վրա բողոքի փաստարկները ճանաչվում են չհիմնավորված և դատական ակտի բեկանման համար հիմք չհանդիսացող[40]: Այսպիսով վերադաս դատարանը, կիրառելով սույն լիազորությունը, իր որոշմամբ հաստատում է բողոքարկված դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը[41]:

Ընդ որում, քննարկվող լիազորության կիրառման դեպքում, վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորումը ենթադրում է ոչ թե բողոքարկված միջանկյալ դատական ակտում պարունակվող փաստարկների կրկնություն և դրա օրինականության և հիմնավորվածության պարզ վերահաստատում, այլ՝ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին կատարված հստակ անդրադարձ և բողոքի փաստարկների հերքում: Ասվածը համահունչ է ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշմանն առ այն, որ վերաքննիչ դատարանը բողոքը քննելիս պարտադիր կերպով պետք է անդրադառնա վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին[42]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով կայացված որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ բողոքի յուրա-

---

[40] Տե՛ս օրինակ Гражданское процессуальное право России / Под ред. **П. В. Алексия, Н. Д. Амаглобели.** 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, էջ 335, Гражданский процесс: Учебник / Под ред. **А. Г. Коваленко**, **А. А. Мохова, П. М. Филиппова.** - М.: «ИНФРА-М», 2008, էջ 268:

[41] Տե՛ս Гражданский процесс России: Учебник / Под ред. **М. А. Викут.** - М.: «Юристъ», 2005, էջ 218:

[42] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թ. հուլիսի 1-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0365/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԳԴ4/0092/02/11քաղաքացիական գործով:

քանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին՝

- արդյո՞ք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում,

- եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ:

Վերը նշված կանոնները լիովին կիրառելի են նաև միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների մերժման դեպքում: Այդ լիազորությունը կիրառելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին՝ առանձին մատնանշելով, թե ինչ պատճառաբանությամբ է անհիմն համարում վերաքննիչ բողոքի այս կամ այն փաստարկը:

Բողոքի քննության ընթացքում վերադաս դատարանը կարող է ի հայտ բերել առանձին դատավարական նորմերի խախտումներ և ոչ էական թերություններ, որոնք չեն ազդում կայացված դատական ակտի՝ ըստ էության ճիշտ լինելու վրա: Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած կարծիքի համաձայն՝ բողոքը քննող դատարանը, չբեկանելով դատական ակտը, պարտավոր է իր որոշման մեջ մատնանշել այդ խախտումները և թերությունները[43]: Մեկ այլ հեղինակ նշում է, որ վերադաս դատարանն իրավունք ունի միջանկյալ դատական ակտից հանել որոշ անճշտություններ, որոնք կարող են ունենալ որոշակի իրավական հետևանքներ[44]:

Մեր կարծիքով, առկա է այս հարցում տարբերակված մոտեցում

---

[43] Տե՛ս Гражданское процессуальное право России / Под ред. **П. В. Алексия, Н. Д. Амаглобели.** - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, էջ 335, Гражданский процесс России: Учебник / Под ред. **М. А. Викут.** - М.: «Юристъ», 2005, էջ 224, Гражданский процесс: учеб. для вузов / Под ред. **М. К. Треушникова.** -2-е изд., перераб. и доп. – М.: «Городец», 2007, էջ 544:

[44] Տե՛ս **Комиссаров К. И.,** Полномочия суда второй инстанции в гражданском процессе. - М., 1961, էջեր 15-16:

կիրառելու անհրաժեշտություն: Ինչպես արդեն նշել ենք, միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու լիազորությունը վերաքննիչ դատարանի կողմից կարող է կիրառվել հետևյալ երեք դեպքերում.

1) Բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և հիմնավորված է, իսկ վերաքննիչ բողոքը՝ անհիմն - այս դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին՝ փաստարկելով դրանց անհիմն լինելը: Ի լրումն վերը նշվածի, վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ կարող է ներկայացնել լրացուցիչ փաստարկներ առ այն, որ բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և հիմնավորված է:

2) Բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և/կամ հիմնավորված չէ, սակայն վերաքննիչ բողոքը նույնպես անհիմն է - այս դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին՝ փաստարկելով դրանց անհիմն լինելը: Վերաքննիչ դատարանն իրավասու չէ քննարկել բողոքարկված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև՝ բողոքարկված դատական ակտի՝ ըստ էության ճիշտ լինելը կամ չլինելը (ասվածը բխում է վերաքննիչ բողոքը դրա հիմքերի և հիմնավորումների շրջանակներում քննելու պահանջից):

3) Բողոքարկված միջանկյալ դատական ակտն ըստ էության ճիշտ է, սակայն օրինական և/կամ հիմնավորված չէ, իսկ վերաքննիչ բողոքը հիմնավոր է - այս դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է.

- իր որոշման մեջ մատնանշել առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալները՝ միայն այն սխալների մասով, որոնց մասին նշված է վերաքննիչ բողոքում (ինչը բխում է վերաքննիչ բողոքը դրա հիմքերի և հիմնավորումների շրջանակներում քննելու պահանջից),

- իր որոշման մեջ հիմնավորել այն հանգամանքը, որ բողոքարկված միջանկյալ դատական ակտն ըստ էության ճիշտ է (բողոք բերված անձի կողմից նշված խախտումները չեն ազդել բողոքարկված միջանկյալ դատական ակտի եզրափակիչ մասի վրա):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ

բողոքի քննության արդյունքներով կայացված որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով այն հարցին, թե, բողոքը հիմնավոր լինելու դեպքում, արդյոք վերաքննիչ բողոքում նշված, դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա, թե՞ ոչ՝ պատճառաբանելով համապատասխան եզրահանգումը: Իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241[1]-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը, պարզելով, որ գործը քննած դատարանի թույլ տված իրավունքի նորմերի խախտումները հիմք չեն վճռի բեկանման համար, պետք է դրանց մասին նշի կայացրած որոշման մեջ:

Գտնում ենք, որ վերը նշված կանոնները կիրառելի են նաև միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքում և առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220.1-րդ հոդվածը (որում սահմանված են ընդհանուր իրավասության դատարանի որոշումների (միջանկյալ դատական ակտերի) դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումներին ներկայացվող պահանջները և դրանց բովանդակությունը) լրացնել հետևյալ բովանդակություն ունեցող նախադասությամբ. *«Վերաքննիչ դատարանը, պարզելով, որ բողոք բերած անձի կողմից մատնանշված, դատարանի կողմից թույլ տրված իրավունքի նորմերի խախտումները հիմք չեն բողոքարկված միջանկյալ դատական ակտի վերացման համար, պետք է այդ մասին նշի իր որոշման մեջ՝ հիմնավորելով իր նման դիրքորոշումը»:*

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. *Գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները մերժելու հիմքերը նույնն են:*

2. *Քննարկվող լիազորությունը ունի պարտադիր (ոչ հայեցողական) բնույթ: Համապատասխան պայմանների առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է մերժել վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ թողնելով բողոքարկված միջանկյալ դատական ակտը:*

3. *Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը*

մերժելու և բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ.

ա) Միջանկյալ դատական ակտն օրինական և հիմնավորված է, իսկ դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկներն անհիմն են:

բ) Միջանկյալ դատական ակտն օրինական և հիմնավորված չէ, սակայն դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկները նույնպես անհիմն են:

գ) Միջանկյալ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը հիմնավոր է, սակայն բողոքարկված միջանկյալ դատական ակտն ըստ էության ճիշտ է և բխում է ինչպես գործում առկա ապացույցներից, այնպես էլ՝ կիրառման ենթակա դատավարական և նյութական օրենսդրությունից:

4. *Նպատակահարմար ենք գտնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ դրույթով. «Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած ըստ էության ճիշտ միջանկյալ դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը»:*

5. *Քննարկվող լիազորությունը կիրառելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին՝ առանձին մատնանշելով, թե ինչ պատճառաբանությամբ է անհիմն համարում վերաքննիչ բողոքի այս կամ այն փաստարկը:*

6. *Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է իր որոշման մեջ մատնանշել առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալները՝ միայն վերաքննիչ բողոքում մատնանշված շրջանակներում: Այն դեպքում, երբ բողոքարկված միջանկյալ դատական ակտն օրինական և/կամ հիմնավորված չէ, սակայն վերաքննիչ բողոքը նույնպես անհիմն է, վերաքննիչ դատարանը, մերժելով բողոքը, իրավասու չէ քննարկել բողոքարկված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև՝ բողոքարկված դատական ակտի՝ ըստ էության ճիշտ լինելը կամ չլինելը:*

7. *Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օ-*

բենսգրքի 220.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակություն ունեցող նախադասությամբ. «Վերաքննիչ դատարանը, պարզելով, որ բողոք բերած անձի կողմից մատնանշված, դատարանի կողմից թույլ տրված իրավունքի նորմերի խախտումները հիմք չեն բողոքարկված միջանկյալ դատական ակտի վերացման համար, պետք է այդ մասին նշի իր որոշման մեջ՝ հիմնավորելով իր նման դիրքորոշումը»:

Ваагн Григорян
аспирант кафедры гражданского процесса ЕГУ

ПРОБЛЕМЫ, СВЯЗАННЫЕ С ПРИМЕНЕНИЕМ ПОЛНОМОЧИЯ ОТКЛОНЕНИЯ АПЕЛЛЯЦИОННЫХ ЖАЛОБ НА ОПРЕДЕЛЕНИЯ СУДА ПЕРВОЙ ИНСТАНЦИИ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

В данной статье рассмотрены сущность и правовой характер полномочия отклонения апелляционных жалоб на определения суда первой инстанции, а также рассмотрены основания применения данного полномочия и те критерии, которым должны соответствовать определения суда первой инстанции. В статье обсуждены также правовые последствия применения данного полномочия, и критерии, которым должны соответствовать решения Апелляционного суда РА, принятые вследствие применения указанного полномочия. Автор обсуждает ряд проблем, связанных с применением данного полномочия и в результате предлагает внести ряд поправок к Гражданско-процессуальному кодексу РА.

Vahagn Grigoryan
PhD student of the YSU Chair of Civil Procedure

PROBLEMS RELATED TO THE AUTHORITY TO REJECT AN APPEAL AGAINST INTERLOCUTORY JUDICIAL ACT

This article discusses the legal nature of the authority of the Court of Appeal of RA to reject the appeals against the interlocutory of the courts of first instance. The author also discusses the grounds of usage of the abovementioned authority, the criteria to be met by the decision of the courts of first instance, the legal consequences of the application of the mentioned authority and the criteria to be met by the decisions of the

Court of Appeal taken as a result of the application of that authority. The author discusses a number of problems associated with the application of the mentioned authority, and offers a number of amendments to the Civil Procedure Code of the Republic of Armenia.

Բանալի բառեր՝ *վերաքննիչ դատարան, վերաքննիչ դատարանի լիազորություններ, միջանկյալ դատական ակտ, միջանկյալ դատական ակտի դեմ բերված բողոքի մերժում, միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի մերժման հիմքեր, դատական ակտի օրինականություն և հիմնավորվածություն, լիազորության կիրառման իրավական հետևանքներ:*

Ключевые слова: *Апелляционный суд, полномочия Апелляционного суда, определение суда первой инстанции, отклонение апелляционной жалобы на определение суда первой инстанции, основания отклонения апелляционной жалобы на определение, законность и обоснованность определения, правовые последствия применения полномочия.*

Key words: *Court of Appeal, powers of the Court of Appeal of the RA, interlocutory decision of the court of first instance, rejection of the appeals against the interlocutory decisions of the courts of first instance, the grounds of application of authority to dismiss the appeals against the decisions of the courts of first instance, legality and validity of the intermediary decisions, the legal consequences of the application of the authority.*